

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 76-րդ հոդվածի 4-րդ մասում «104-րդ հոդվածի երկրորդ մասով» բառերից հետո լրացնել «132-րդ հոդվածի երկրորդ, երրորդ մասերով, 132.2-րդ հոդվածի երկրորդ, երրորդ մասերով,» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 126-րդ հոդվածը ձանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Օրենսգրքի 132-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 132. Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը

1. Մարդու թրաֆիքինգը՝ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձեւերով, ամբուստան, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
- 2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 3) պաշտոնեական դիրքն օգտագործելով,
- 4) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բնություն գործադրելով կամ դա

գործադրելու սպառնալիքով,

5) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

6) ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

- 1) կատարվել է կազմակերպված խմբի կողմից,
- 2) անզուլությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետեւանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնչորս տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

4. Սույն հոդվածում, ինչպես նաև սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածում շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:»:

5. Սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններից տուժած անձն ազատվում է իր կողմից կատարված ոչ մեծ կամ միջին ծանրության այն հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից, որոնցում ներգրավված է եղել՝ իր նկատմամբ իրականացված թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում և այդ արարքները կատարել է հարկադրանքի ներքո:»:

Հոդված 4. Ուժը կորցրած ձանաչել Օրենսգրքի 132.1-րդ հոդվածը:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 132.2-րդ հոդվածով.

«Հոդված 132.2. Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը

1. Շահագործման նպատակով երեխային, հոգեկան խանգարման հետեւանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը`

պատժվում է ազատազրկմամբ` յոթից տասը տարի ժամկետով` գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով` առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է`

- 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
- 2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 3) պաշտոնեական դիրքը օգտագործելով,
- 4) բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
- 5) առևանգման միջոցով,
- 6) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
- 7) ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով`

պատժվում է ազատազրկմամբ` տասից տասներկու տարի ժամկետով` գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով` առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը`

- 1) կատարվել է կազմակերպված խմբի կողմից,
- 2) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետեւանքներ`

պատժվում է ազատազրկմամբ` տասներկուսից տասնհինգ տարի ժամկետով` գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով` առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

Հոդված 6. Օրենսգիրքը լրացնելի հետևյալ բովանդակությամբ նոր` 132.3-րդ հոդվածով.

«Հոդված 132.3. Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը

1. Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը, եթե այդ անձի շահագործման վիճակի մեջ լինելը ակնհայտ է ծառայությունից օգտվողի համար և եթե հանցագործություն կատարած անձի արարքում բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ կամ 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները`

պատժվում է տուգանքով` նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով կամ ազատազրկմամբ` առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է`

- 1) ակնհայտ անչափահասի նկատմամբ,
- 2) հոգեկան խանգարման հետեւանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի նկատմամբ,
- 3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
- 4) երկու կամ ավելի անձանց նկատմամբ`

պատժվում է ազատազրկմամբ` առավելագույնը երեք տարի ժամկետով` որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով` առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին տուժողի մասին կամովին տեղեկություններ հայտնած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:»:

Հոդված 7. Օրենսգրքի 165-րդ հոդվածում`

1) 1-ին մասում «առավելագույնը երեք տարի» բառերը փոխարինել` «մեկից հինգ տարի» բառերով:

2) 2-րդ մասում` «առավելագույնը երեք տարի» բառերը փոխարինել` «երկուսից վեց տարի» բառերով:

3) 3-րդ մասում` «երկուսից յոթ տարի ժամկետով» բառերը փոխարինել` «երեքից յոթ տարի ժամկետով` որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով` առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա» բառերով:

4) 4-րդ մասում` «հինգից յոթ տարի ժամկետով» բառերը փոխարինել` «հինգից տասը տարի ժամկետով` որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով` առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 166-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

«Հոդված 166. Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը

1. Տասնութ տարին լրացած անձի կողմից երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝ ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք՝

1) կատարվել են երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

Հոդված 9. Օրենսգրքը լրացնելի հետևյալ բովանդակությամբ նոր՝ 166.1-րդ հոդվածով.

«Հոդված 166.1. Երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը ներգրավելը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը

1. Տասնութ տարին լրացած անձի կողմից երեխային պարբերաբար ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը ներգրավելը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝ ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք՝

1) կատարվել են երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

Հոդված 10. Օրենսգրքի 167-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝ «կամ երեխային փոխելը» բառերից հետո լրացնելի՝ «եթե բացակայում են սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները» բառերը:

2) Ուժը կորցրած ճանաչելի 2-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերը:

Հոդված 11. Օրենսգրքի 168-րդ հոդվածը շարադրելի հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 168. Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը

1. Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

2) երկու կամ ավելի երեխաների նկատմամբ

3) ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով,

4) կեղծ որդեգրում կատարելու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

Հոդված 12. Օրենսգրքի 261-րդ և 262-րդ հոդվածները շարադրելի հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 261. Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությանը զբաղվելուն ներգրավելը
1. Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությանը զբաղվելուն ներգրավելը, եթե բացակայում է սույն օրենսգրքի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ մինչև երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

1. Նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) պաշտոնեական դիրքն օգտագործելով,
- 3) ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով,
- 4) ակնհայտ հղի կնոջը նկատմամբ,
- 5) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Հոդված 262. Պոռնկությանը զբաղվելուն նպաստելը

1. Պոռնկությանը զբաղվելու համար հաստատություն ստեղծելը, ղեկավարելը կամ պահելը կամ որեւէ հանրային հաստատություն պոռնկությանը զբաղվելու համար օգտագործելը կամ այլ անձի պոռնկությանը զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելը կամ գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությանը զբաղվելուն այլ ձեւով նպաստելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ կամ 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ մինչև երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) պաշտոնեական դիրքն օգտագործելով,
- 3) ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով,
- 4) ակնհայտ հղի կնոջը օգտագործելով,
- 5) երկու կամ ավելի անձանց օգտագործելով,
- 6) անչափահասին օգտագործելով,
- 7) հոգեկան խանգարման հետեւանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

Հոդված 13. Օրենսգրքի 263-րդ հոդվածում՝

1) Վերնագրում և 1-ին մասում «տարածելը» բառերից առաջ հանել «ապօրինի» բառը, ինչպես նաև «պատրաստելը» բառից հետո լրացնել «եթե բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ, 132.2-րդ հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշները» բառերը,

2) 2-րդ մասից հանել «Պոռնկագրական բնույթի համակարգչային ծրագրերի, կինոյի կամ տեսաֆիլմերի նյութերի, պատկերների կամ պոռնկագրական բնույթի այլ առարկաների ստեղծմանն անչափահասներին մասնակից դարձնելը, ինչպես նաև.» բառերը:

Հոդված 14.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ արված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը	Եզրակացություն
<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ս.Սաֆարյան</p>	<p>հոդված 3</p>	<p>Նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասում «օրգանները» բառից առաջ գրել «մարմնի մասերը» բառերը:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>Մարդուն օրգաններ և /կամ/ հյուսվածքներ փոխապատվաստելու մասին ՀՀ օրենքում «Օրգաններ» հասկացությունը մեկնաբանվում է որպես՝ ,տարբեր հյուսվածքներից բաղկացած (որոնցից մեկը գլխավորն է՝ առաջատարը) և որոշակի ձև ունեցող մարմնի մաս, որը տարբերվում է իր հստակ կառուցվածքով, օրգանիզմում զբաղեցրած որոշակի տեղով և կենսագործունեությամբ:</p>
	<p>հոդված 6</p>	<p>Նախագծի 6-րդ հոդվածով սահմանված 132.3-րդ հոդվածի 3-րդ մասում «132-րդ» և «132.2-րդ» բառերից հետո գրել «հոդվածներով» բառը՝ «հոդվածով»-ի փոխարեն:</p>	<p>Առաջարկության հիման վրա նոր խմբագրությամբ շարադրվող օրենսգրքի 132.3-րդ հոդվածի 3-րդ մասում առկա խմբագրական թերությունը վերացվել է:</p>
	<p>հոդված 9</p>	<p>Նախագծի 9-րդ հոդվածով նախատեսված 166.1-րդ հոդվածի վերնագրի և դիսպոզիցիայի «կամ թափառաշրջիկությունը» բառերն ամրագրել նախագծի նախորդ՝ 8-րդ հոդվածով սահմանված 166-րդ հոդվածում:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը և թափառաշրջիկության մեջ ներգրավելը ունեն տարբեր հանրային</p>

			<p>վտանգավորության աստիճան: Բացի այդ, պարզ չէ «թափառաշրջիկության մեջ ներգրավելը» 166-րդ հոդվածում ներառելու վերաբերյալ առաջարկության տրամաբանությունը:</p>
	<p>հոդված 11</p>	<p>Նախագծի 11-րդ հոդվածը հանել:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>Նախագծից 168-րդ՝ «Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը և ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը» հոդվածը հանելը նպատակահարմար չէ, իստ ներկայացված առաջարկը չի մեկնաբանվել:</p>
<p><< կառավարություն</p>	<p>հոդված 3</p>	<p>1. Նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասում «շահագործման նպատակով» բառերից առաջ լրացնել «Մարդու թրաֆիքինգը՝» բառերը և «ինչպես նաև» բառերից հետո լրացնել «մարդուն շահագործելը կամ» բառերը:</p> <p>2. Նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայում ազատագրկման նվազագույն չափը 4 տարվա փոխարեն սահմանել 5 տարի՝ հաշվի առնելով քննարկվող հանցատեսակի վտանգավորության աստիճանը և այն հանգամանքը, որ գործող քրեական օրենսգրքում ևս այս հանցագործության համար ազատագրկման նվազագույն ժամկետը 5 տարի է:</p> <p>3. Նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասում «վիճակի մեջ դնելը» բառերից հետո լրացնել «առքը կամ վաճառքը» բառերը:</p>	<p>1. Առաջարկությունն ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>2. Առաջարկությունն ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>

			<p>3. Առաջարկությունն ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
	<p>հոդված 5</p>	<p>Նախագծի 5-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենսգրքի 132.2-րդ հոդվածի 1-ին մասում «ինչպես նաև» բառերից հետո լրացնել «այդպիսի անձանց շահագործելը կամ» բառերը:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
	<p>հոդված 11</p>	<p>Նախագծի 11-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 168-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «և» բառը փոխարինել «կամ» բառով, քանի որ անհրաժեշտ է տարանջատել միմյանցից «Երեխայի առք» և «Երեխայի վաճառք» գործողությունները:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
<p>«Ազգային ժողովի պատգամավոր, «Հանրապետական» խմբակցության անդամ Կ.Նահապետյան</p>	<p>հոդված 3, 5</p>	<p>1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 132-րդ հոդվածի վերնագիրը և 5-րդ մասը, ինչպես նաև նոր` 132.2-րդ հոդվածի վերնագիրը «թրաֆիքինգ» բառից հետո լրացվել է «կամ շահագործումը» բառերով կամ համապատասխան հոլովածներով (նախագծի 3-րդ և 5-րդ հոդվածներ):</p> <p>Արդյունքում ստացվել է, որ «թրաֆիքինգը» և «շահագործումը» տարբեր հասկացություններ են, և անձի կատարած հանցանքը կարող է լինել կամ թրաֆիքինգ, կամ շահագործում: Ավելին, եթե համադրենք վերոնշյալ հոդվածներում օգտագործված «թրաֆիքինգը կամ շահագործումը» արտահայտությունը քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասի հետ, ապա կստացվի, որ թրաֆիքինգը տարանջատում ենք այլ անձի` պոռնկության շահագործումից կամ սեքսուալ շահագործման այլ ձևերից, հարկադիր աշխատանքից կամ ծառայություններից, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելուց, օրգանները կամ հյուսվածքները վերցնելուց:</p> <p>Սակայն Միավորված ազգերի կազմակերպության 2000 թ. «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» Պալերմոյի արձանագրությամբ և Եվրոպայի Խորհրդի 2005 թ. «Մարդկանց</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>«Շահագործումը» որպես նպատակ թրաֆիքինգի բաղկացուցիչ տարրերից է, բայց միևնույն ժամանակ հանցավոր տարբեր արարքներ նկարագրող տերմին` անձի` պոռնկության շահագործում կամ սեքսուալ շահագործման այլ ձևեր, հարկադիր աշխատանք կամ ծառայություններ, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնել, առքը կամ վաճառք, օրգաններ կամ հյուսվածքներ վերցնել:</p> <p>Թրաֆիքինգը` միջազգային տերմին է, որը նշանակում է մինչև մարդու շահագործումը, սակայն այդ նպատակով, հարկադրանքի ներքո նրա նկատմամբ իրականացված հանցավոր տարբեր գործողություններ` հավաքագրել, տեղափոխել, փոխանցել, թաքցնել կամ ստանալ: Թրաֆիքինգը սահմանող կոնվենցիաները չեն անդրադարձնում որպես հանցավոր արարքի` բուն մարդու</p>

		<p>թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» կոնվենցիայով տրված մարդկանց թրաֆիքինգի սահմանումից բխում է, որ թրաֆիքինգի առկայության համար անհրաժեշտ է երեք տարրերի՝ գործողություն, միջոց և նպատակ, միաժամանակյա առկայություն՝ բացառությամբ երեխայի թրաֆիքինգի, երբ արարքը պետք է որակվի որպես թրաֆիքինգ նույնիսկ երբ երեխայի նկատմամբ չի կիրառվել թրաֆիքինգի սահմանմամբ տրված որևէ միջոց:</p> <p>Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ շահագործումը որպես նպատակ թրաֆիքինգի բաղկացուցիչ տարրերից է, հետևաբար անթույլատրելի է «թրաֆիքինգ կամ շահագործում» արտահայտության նախատեսումը քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներում:</p> <p>Եվրոպայի Խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» կոնվենցիային կից պարզաբանող գեկույցի համաձայն հանցանքը պետք է որակվի մարդկանց թրաֆիքինգ ոչ միայն այն դեպքում, երբ անձն արդեն շահագործվել է, այլև նախքան փաստացի շահագործումը, երբ անձը շահագործման նպատակով ենթարկվել է թրաֆիքինգի սահմանման մեջ նշված գործողություններից որևէ մեկին սահմանված միջոցներից ցանկացածի օգտագործմամբ: Հետևաբար այս տեսանկյունից ևս ճիշտ չէ «թրաֆիքինգ կամ շահագործում» արտահայտության կիրառումը:</p> <p>Միավորված ազգերի կազմակերպության 2000թ. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող Պալերմոյի արձանագրությունում և Եվրոպայի Խորհրդի 2005 թ. «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» կոնվենցիայում «մարդկանց թրաֆիքինգ» տերմինից բացի օգտագործվում է նաև «անձանց շահագործում» տերմինը: Սակայն օրինակ Արձանագրության 9-րդ և Կոնվենցիայի 6-րդ հոդվածների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ անձանց շահագործումը մի երևույթ է, որը կարող է հանգեցնել թրաֆիքինգի, ինչից հետևում է, որ «անձանց շահագործում» և «թրաֆիքինգ» հասկացությունները որպես հոմանիշներ չեն օգտագործված:</p> <p>Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում են քրեական օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 132-րդ հոդվածի</p>	<p>շահագործմանը, այլ պատժի համար բավարար են համարում այդ նպատակով իրականացված վերոգրյալ գործողություններից ցանկացածի առկայությունը, մինչդեռ հնարավոր են մարդու շահագործման դեպքեր առանց դրան նախորդած թրաֆիքինգի:</p> <p>Փաստացի նախագծով առաջարկվող 132-րդ և 132.2-րդ հոդվածներում նկարագրված է հանցավոր գործողությունների շարք, որոնցից մի մասին՝ շահագործման նպատակով հավաքագրմանը, տեղափոխմանը, փոխանցմանը, թաքցմանը կամ ստացմանը քննարկվող կոնվենցիաներով տրված է «Թրաֆիքինգ» անվանումը, իսկ մյուս գործողություններին՝ «Շահագործում» անվանումը:</p>
--	--	--	--

		<p>վերնագրից և 5-րդ մասից, ինչպես նաև նոր՝ 132.2-րդ հոդվածի վերնագրից հանել «կամ շահագործումը» բառերը (համապատասխան հոլովածները):</p>	
	<p>հոդված 3, 5</p>	<p>Քրեական օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 132-րդ հոդվածի 5-րդ մասում (նախագծի 3-րդ հոդված) սահմանված է, որ 132-րդ հոդվածով, ինչպես նաև օրենսգրքի նոր՝ 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններից տուժած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից իր կողմից կատարված ոչ մեծ կամ միջին ծանրության այն հանցագործությունների համար, որոնցում ներգրավված է եղել իր նկատմամբ իրականացված թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում և այդ արարքները կատարել է հարկադրանքի ներքո:</p> <p>Օրենսգրքի 132-րդ հոդվածի վերոնշյալ դրույթի լրամշակումը պայմանավորված է Եվրոպայի Խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» կոնվենցիայի պահանջով, որի 26-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր Կողմ, ելնելով իր իրավական համակարգի հիմնական սկզբունքներից, պետք է նախատեսի զոհերի նկատմամբ նրանց ապօրինի գործողությունների համար պատիժ չկիրառելու հնարավորություն այն դեպքում, երբ նրանց նկատմամբ հարկադրանք է գործադրվել այդպիսի վարքագիծ դրսևորելու համար»: Կոնվենցիային կից պարզաբանող զեկույցի համաձայն, ի կատարումն 26-րդ հոդվածով սահմանված պարտավորության, յուրաքանչյուր Կողմ պետք է իր քրեական իրավունքում կամ քրեական դատավարության իրավունքում նախատեսի այնպիսի դրույթներ, որոնք տալիս են զոհերի նկատմամբ պատիժ չկիրառելու հնարավորություն, եթե բավարարվել են վերոնշյալ իրավական պահանջները:</p> <p>Հարկ է նշել, որ քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածն արդեն իսկ սահմանում է, որ «1. Հանցագործություն չի համարվում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ, եթե դրա հետևանքով անձը չէր կարող ղեկավարել իր գործողությունները (անգործությունը): 2. Քրեական պատասխանատվության հարցն այն դեպքերում, երբ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառվում</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի 26-րդ հոդվածով սահմանվում է զոհերի նկատմամբ նրանց ապօրինի գործողությունների համար պատիժ չկիրառելու հնարավորություն այն դեպքում, երբ նրանց նկատմամբ հարկադրանք է գործադրվել այդպիսի վարքագիծ դրսևորելու համար: Ընդ որում հարկադրանք ասելով պետք է հասկանալ՝ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը կամ հարկադրանքի այլ ձևերը, առեւանգումը, խաբեությունը կամ վստահությունը չարաշահելը, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելը կամ վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալը կամ ստանալը կամ այդպիսիք խոստանալը:</p> <p>Քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածն սահմանում է, որ հանցագործություն չի համարվում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ, եթե դրա հետևանքով անձը չէր կարող ղեկավարել իր գործողությունները (անգործությունը), իսկ երբ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառվում հոգեկան, ինչպես նաև ֆիզիկական այնպիսի հարկադրանքի ազդեցությամբ, որն անձին չի զրկում իր</p>

		<p>հոգեկան, ինչպես նաև ֆիզիկական այնպիսի հարկադրանքի ազդեցությամբ, որն անձին չի զրկում իր գործողությունները ղեկավարելու հնարավորությունից, լուծվում է՝ հաշվի առնելով ծայրահեղ անհրաժեշտությանը (օրենսգրքի 44-րդ հոդված) վերաբերող դրույթները:»:</p> <p>Այսինքն ՀՀ քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածն արդեն իսկ ամբողջությամբ բավարարում է Կոնվենցիայի 26-րդ հոդվածի պահանջը և ըստ էության անհրաժեշտություն չկա առանձին դրույթ նախատեսելու քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածում:</p> <p>Ավելին, քրեական օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 132-րդ հոդվածի 5-րդ մասում տրված կարգավորման համաձայն թրաֆիքինգից տուժած անձը հարկադրանքի ներքո ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելիս, անկախ հարկադրանքի ազդեցության արդյունքում իր գործողությունները (անգործությունը) ղեկավարելու հնարավորությունից զրկված լինելու կամ չլինելու հանգամանքից, ազատվում է քրեական պատասխանատվությունից:</p> <p>Միևնույն ժամանակ, եթե հարկադրանքի ներքո ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է կատարվում թրաֆիքինգից տուժած չհանդիսացող անձի կողմից, ապա վերջինս ոչ թե անմիջապես ազատվելու է քրեական պատասխանատվությունից, այլ նրա քրեական պատասխանատվության հարցը լուծվելու է քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի կանոններով:</p> <p>Արդյունքում քրեական օրենսգրքի տարբերակված մոտեցում է ցուցաբերում հարկադրանքի ներքո ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած թրաֆիքինգից տուժած անձանց և թրաֆիքինգից տուժած չհանդիսացող անձանց նկատմամբ նրանց քրեական պատասխանատվության հարցը լուծելիս, ինչն ըստ էության հակասում է օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական պահանջին:</p> <p>Վերոնշյալից բացի քրեական օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 132-րդ հոդվածի 5-րդ մասում տրված կարգավորման համաձայն, եթե թրաֆիքինգից տուժած մի խումբ անձինք հարկադրանքի ներքո ապօրինի հատում են</p>	<p>գործողությունները ղեկավարելու հնարավորությունից, լուծվում է՝ հաշվի առնելով ծայրահեղ անհրաժեշտությանը (օրենսգրքի 44-րդ հոդված) վերաբերող դրույթները:</p> <p>Օրենսգրքի 44-րդ և 45-րդ հոդվածները չեն ապահովում պատժից ազատելու վերաբերյալ կոնվենցիայի պահանջի ամբողջականությունը: Ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը կոնվենցիայում նշված հարկադրանքի ձևերի ընդամենը ստվար մասն են կազմում:</p> <p>Նախագծով առաջարկվող՝ 132-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված չէ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար պատասխանատվությունից ազատելը, սակայն այն ընդգրկում է կոնվենցիայի պահանջի ավելի լայն շրջանակ:</p> <p>Ստացվում է, որ ոչ մեծ կամ միջին ծանրության այն հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից ազատելը կարգավորվում է 132-րդ հոդվածի 5-րդ մասով, իսկ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար պատասխանատվության հարցը լուծվում է օրենսգրքի ընդհանուր մասի համապատասխան հոդվածներով, ինչը մեր կարծիքով ավելի ընդունելի տարբերակ է:</p> <p>Նշված մոտեցումը չի առաջացնում իրավական ակտի ընդհանուր և հատուկ մասերի միջև հակասություն, այլ կարող է դիտվել որպես քրեական օրենսգրքի տարբեր դրույթների միջև մրցակցություն:</p>
--	--	---	--

		<p>ՀՀ պետական սահմանը, ապա քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա չեն ազատվելու քրեական պատասխանատվությունից, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նրանց կողմից կատարվել է ծանր հանցագործություն: Հարկադրանքի ներքո ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների կատարման դեպքում թրաֆիքինգից տուժած անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվելու է փաստորեն քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի կանոններով:</p> <p>Ակնհայտ է, որ քրեական օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 132-րդ հոդվածի 5-րդ մասը հակասության մեջ է գտնվում քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի հետ: Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նույն իրավական ակտի ընդհանուր և հատուկ մասերի միջև հակասության դեպքում գործում են ընդհանուր մասի դրույթները:</p> <p>Հաշվի առնելով վերոնշյալ նկատառումները՝ առաջարկում են հանել ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 5-րդ մասը կամ այն վերախմբագրել և շարադրել հետևյալ կերպ՝</p> <p>«5. Սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններից տուժած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից իր կողմից կատարված այն հանցագործությունների համար, որոնցում ներգրավված է եղել իր նկատմամբ իրականացված թրաֆիքինգի ընթացքում և այդ արարքները կատարել է հարկադրանքի ազդեցությամբ, եթե դրա հետևանքով անձը չէր կարող ղեկավարել իր գործողությունները (անգործությունը): Եթե հարկադրանքի ազդեցությամբ անձը չի գրկվում իր գործողությունները (անգործությունը) ղեկավարելու հնարավորությունից, քրեական պատասխանատվության հարցը լուծվում է՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի 44-րդ հոդվածի դրույթները:»:</p>	
	<p>հոդված 11</p>	<p>Քրեական օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 168-րդ հոդվածով (նախագծի 11-րդ հոդված) առաջարկվում է երեխայի խնամքը ստանձնելու կամ երեխային ստանձնողի խնամքին հանձնելու նպատակը նախատեսել որպես հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվել:</p> <p>Նախագծի երկրորդ ընթերցման համար ներկայացված տարբերակում առքը կամ վաճառքը, որպես շահագործման ձև,</p>

		<p>Գործնականում հնարավոր է սակայն, որ երեխայի առջը կամ վաճառքն իրականացվի ոչ խնամքը ստանձնելու (ստանձնողի խնամքին հանձնելու), ոչ էլ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով շահագործման նպատակով: Օրինակ, եթե անձը գնում է երեխա, քանի որ երեխա ունենալը ժառանգություն կամ նպաստ ստանալու պարտադիր պայման է, ապա երեխայի առջը և վաճառքն այս դեպքում չի հետապնդում ոչ խնամքը ստանձնելու (ստանձնողի խնամքին հանձնելու), ոչ էլ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով շահագործման նպատակ, ինչը նշանակում է, որ նկարագրված արարքը չի կարող որակվել քրեական օրենսգրքի ոչ 132-րդ, ոչ էլ 168-րդ հոդվածով:</p> <p>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 168-րդ հոդվածի առաջարկվող խմբագրությունը չի բացառում, որ երեխայի առջի կամ վաճառքի որոշակի դեպքեր դուրս մնան քրեական պատասխանատվությունից, առաջարկում են օրենսգրքի 168-րդ հոդվածից հանել «խնամքը ստանձնելու նպատակով» և «ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով» բառերը:</p>	<p>ներառվել է նախագծի 132-րդ հոդվածի 4-րդ մասում և այդպիսով բացառվում է երեխայի առջի կամ վաճառքի որոշակի դեպքերի համար հանցավորների պատասխանատվությունից խուսափելը:</p>
--	--	---	---